

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական և Իտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 47

Գ. ՇՐՋԱՆ

23 ՆՈՅԵՄԲ. 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթների արեւելեան բաժանորդացիներն և Գ. Պոլսոյ համար Բաւառացի ղը. եւ գաւառներուն համար Յիւսուց ղը., կանխիկ վճարելի: Արտասահման 12 ֆրանկ կամ 5 ռուպլի: Թղթատարական ծախքը խաբարութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն: Մասիս հրապարակ կ'ըլլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խոյն խնայեն խաբարութեան: Ժամանակ անցնելի վերջ աշխատեալ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Չեմք կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հարց

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزته سی اداره سنه

ԼԵՄԱՍԻՍԻՍԻՍ (ՄԱՍԻՍ) Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ԱՊՐԱՆԻԿ ՎԱՅԱԲՈՒՄ

ՎԱՅԱՐԱՏՈՒՆ ՀԵՐՃԱՅԻ



ԱՊՐԱՆԻԿ ՎԱՅԱՐԱՏՈՒՄ
Յաճախողաց գիտութեան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ
ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ
ՍԵՐԱԿ ԳՐԱՐԵԼՆԵՐԻ
ՈՇԵՆՆԱՅ՝ ԳԻՆԵՅԺ
Կ. ՊՈԼԻՍ, ՈՍԿԵՐՅԱՆ
Շուկայ մեծ փողոց թիւ 13

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՅԱՐԱՏՈՒՆ ԴՆԻՔ ԵՐՈՍՊԱԿԱՆ
Ճաշակով պատրաստուած գո՛ւարեղէններ ,
տա՛մնքն ալ տա՛լնապարզ ըլլալու պայմանաւ ,
ՀԵՐՃԱՅԻ ՎԱՅԱՐԱՏՈՒՆ ԳՐԻՆԵՐԻ ԱՆՈՐԵՆԻԼԻ ԵՆ ,
ՀԵՐՃԱՅԻ ՎԱՅԱՐԱՏՈՒՆ ԴՆԻՔ ԵՐՈՍՊԱԿԱՆ
առարկաներ ,
ՀԵՐՃԱՅԻ ՎԱՅԱՐԱՏՈՒՆ ԴՆԻՔ ԺԱՄԱԳՈՅՆԻՐ
ԵՆ ԵՐՈՍՊԱԿԱՆ ԳԱՐԱՊԱՆԻՐ (ԿՊԱՅՈՑ) :

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՐԻՐԻՆ ԲԱՆ ԿԱՆԻՐԻԿ , ՄԻԱԳԻՄԻՆ ԿԱՆ
ՄԱՐ ԶԱՐԱԹԱԿԱՆ , ԲԱՐԻՐԻՆ ԲԻՐԵՂ ՎՃԱՐՈՒՄ ,
ԿԱՆԻՐԻԿ ԳՆՈՂԻՆ ԿԱՆԱՐ 100ԻՆ 5 ԿԵՂ ,
ԳՐԵՃԱԺՈՒՆ ԳՐԱՐԵԼՆԵՐԻ ԵՐԵՎԱՆԻ
ՈՒՆԱԿ ԿԵՂ 100ԻՆ 10 ԳԵՂՅԱՆ ԵՄ ԿԱՆԱՐԻՆ :



Անկարելի է որ ընտանիք մը տա՛նց կարի
մեքենայի միայ , բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ . որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչքեւ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է ,
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

(ՀԱՅՐԱՅՐԻՉ ԿԱՅՈ. ՊԱՆԱՏԱՆ)
The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է . սոյն մեքենան ամենէն
աւելի կատարելագործուածը , հաստատունը եւ
դիւրագործուելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեխանանք
կը գոնուին :

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ՝

ՍԻՆԿԵՐԻ
ՎԱՅԱՐԱՏՈՒՆ
ՊԱՆԱՏԱՆ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ | { | 1. Մեծ փողոց , Գոն Մառչի գէմ , թ. 343 եւ 343 ԿԵԿԻՆ |
| | | 2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիւէին գէմ . |
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկեր խան , Թիւնէլին ետեւը . |
| | | 2. Դարաքէօյ , Թրամվէյին կայարանին գէմ . |
| ԳՈԼԻՍ | { | 1. Սուլթան Համամ , թիւ 2 . |
| | | 2. Սուլթան Պէյազիտ , Թրամուէյի կայարանին գէմ , թ. 13 |
| ՍԿԻԻՏԱՐ | | Զարչը Գոյու , թ. 120 . |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի .
Կատարեալ երաժշտութիւն
Մասնագիտաց գաւառաց բոլոր հաղաճեւում մէջ

Սինկերի Ընկերութեան կեզը . վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց ,
թ. 343 եւ 343 ԿԵԿԻՆ , Սարգիս պէյ Տիւղօղլուի տունը :

ՄԱՍԻՆ

51րդ ՏԱՐԻ

— 23 ՆՈՅԵՄԲԵՐ 1902 —

ԹԻԻ 47

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրականութիւնը ինչպէ՞ս կը բարգաւաճի (Բ. և վերջին մաս) ԲԱՐԳՎԵՆ ՎԱՐԳՍՊԵՏ : — Տունիս համբան (Պզտիկ նիշեր) ԽՈՍՐՈՎ ԳԷՇԵՆՆԵ : — Ամսական ամսաշարէն. ԳՐԻԶՍՆԹԻՄ : Երազանք (Բանաստեղծութիւն) ՏՕՄԻՆՕ : — Երաժշտութեան համդէպ. ՍԴԷԼԼԱ : — Գիտական պատմիկներ. Վ. Ա. Գ. : — Գեղարուեստական գրականութիւն. Լաուրէլա (Վեպ) ԲԱՌԻԼ ՀԱՅԶԷ : — Յուշարկեր :

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԲԱՐԳԱՒԱՃԻ (*)

Եթէ դժբախտութիւն մըն է վիպամոլութիւնը, աւելի մեծ դժբախտութիւն պէտք է համարել վէպերու ընտրութիւնն ալ : Ո՛րչափ զիտենք՝ ֆրանսական, այն ալ Բարիզեան, կեանքի ու միջնորդի վէպեր թարգմանուած են Հայոց կարգացնելու համար. ետքը կուգան անգլիականները, որոնք թէ՛ հայերէնն են թէ՛ թրքերէն (հայատառ) հրատարակուած թիւներով տարածուած են : Ընտրութեան մէկ կողմն ալ նիւթն է. ընդհանրապէս սիրային եւ ոճաբարդութեան մասը հրապուրելի եղած է վէպերու մէջ. ընդհանրապէս կ'ըսենք, որովհետեւ Վ. Հիւկոյի եւ Էօթէն Սիւրի վիպագրած նիւթերը քիչ են հայերէնի վերածուածներուն մէջ :

Վէպերու թարգմանութիւնը, անշուշտ, աւելի օգտակար կամ ապրեցնող նիւթեր պիտի հայթայթէր հայ գրականութեան համար, եթէ ընտրութիւնը, քառին երկու իմաստովն ալ, թերի ու միակողմանի չըլլար : Որո՞ւնն է այս թերութիւնը. թարգմանիչներո՞ւն թէ ժողովուրդին : Թերեւս երկու կողմերն ալ պատասխանատու են : Ժողովուրդն է պատասխանատուն, որովհետեւ զրօնուի կը սիրէ վէպով եւ միանգամ այդ սեռին վարժուելէ ետքը՝ միշտ նոյնը կ'ուզէ : Թարգմանիչներն են պատասխանատու, որովհետեւ

վէպի մէջ կաշկանդուած միացած են եւ վէպին զաւատող ժողովուրդին այդ տկարութիւնը բուժելու տեղ՝ աւելի եւս զրգռած են զայն : Այս է պատճառը որ մինչեւ սա վայրկեանը լրացրինք ուն ամէնէն կարեւոր մասերը նուիրուած են վէպերու : Ժողովուրդը ա՛յնքան վիպամոլ եղած է եւ կամ գրականութիւնը ա՛յնքան անճրկեղծ ու անանկացած է որ այլեւս մէկ թերթին ալ չբաւար. գոնէ երկու թերթին անհրաժեշտ եղած է հիմայ. ըսել է որ ամէն օր 7—8 վէպ կը թարգմանուի : Դրականութեան այս վիճակը չա՛տ պատուարեր չէ՛ բազմատամբ հիմակուան զարգացումներուն, լեզուագիտութիւններուն ու լեզուախօսութիւններուն, որոնցմով չա՛տ աւելին, այսինքն՝ աւելի պատուարերը, աւելի օգտակարը, աւելի անուցելի կարելի է ընել եւ Պոլիս՝ Թրքահայոց գրականութեան կեդրոնը՝ չընէր զայն :

Չեմ յիշեր թէ ի՞նչ ունինք օտար գրականութիւնէն հետեւողութեամբ եւ իւրացումով ալ : Իրեւ նորութիւն կարելի չէ՛ մտնալ, զոր օրինակ, գերմաներէնէ թարգմանուած առողջապահական ընտիր գործերը, անգլիացի հեղինակներու հետեւողութեամբ չինուած ինքնօգնութեան հատորները եւ թարգմանութիւնները. բայց ասոնք եւ ասոնց նմանները չա՛տ քիչ են բազմատամբ ա՛յն մեծ

(*) Երկրորդ եւ վերջին մաս :

պէտքին, որ կ'արձանանայ արդի գրականութեան առջեւ: Որովհետեւ միմիայն առողջապահական գործերու եւ ինքնօգնութեան գործերու համար չէ՝ որ պէտք է գիմել օտար գրականութեան: Վէպ շատ կը փնտռէ Հայր. լաւ, գոնէ է. Զօլային Երեմ Բաղդակները եւ Զորս Աւեսարսանները թարգմանուելու չէին: Քանզի գործերը, Թէնի ուսումնասիրութիւնները, Սրէնարի քննութիւնները եւլն. եւլն. եւլն, այսպէս քանի մը հաս միայն՝ յիշելու համար, ասոնք տիեզերական միտքեր են, պէտք չէ՞ր որ հայացուէին: Պէտք չունինք իմաստասիրական, կրօնախօսական հեղինակներու, պէտք չունինք գեղարուեստական եւ գիտական գրքերու, պէտք չունինք ընկերաքանական ուսումնասիրութիւններու, պէտք չունինք, վերջապէս, Հայոց արդի գրականութեան բոլոր կողմերն ալ առողջ եւ հիւթեղ ընծայելու համար այլազան տաղձներու: Անգլիոյ ծանր, կշռուած եւ կրթիչ միտքը, Գերմանիոյ խորունկ գանկը, Ամերիկայի հնարագէտ ճակատը, Ֆրանսայի զուարթ եւ ճշգրտատ խելքը, եւ եթէ կ'ուզէք՝ Իտալիոյ վերածնած տաղանդը պէտք չէ՞ որ զուգորդուին մեր արեւելքի՝ ծիածան երեւակայութեան հետ:

Եւ այս բոլորը գալու են արդի գրականութեան մէջ կատարելապէս մարտուելու ետքը. եթէ ասոնք գան մահն հում եւ անմարտելի վիճակի մէջ, կը խանդարեն մեր գրականութեան մարտադական ամբողջ խողովակը եւ այս խանդարումին հետեւանքով մեր գրականութիւնը կ'ունենայ ցաւատանջ խիթեր, անարիւնութիւն, ջլախտաւորութիւն, յօղացաւի ամէն տեսակները, այսինքն՝ գրական կեանք մը, որ ո'չ ինքնիրմէն համ կ'առնէ եւ ո'չ ալ օրիշները իրմէն համ կ'առնեն:

Մեր այսօրուան, եւ վաղուան գրականութիւնն ալ, անխուսափելի կերպով պէտք ունին խնամատ տաժողութեան մը. վասն զի գրականութիւնը կեանքն է եւ կեանքը միակողմանի խնամքով չաճիր, չբարգաւաճիր:

Երբ այսչափ ուժգին կը շեշտւած օտար գրականութեան հայացումը զանազան եղանակներով, չեմ կրնար սնտեւ ընել սա ու

նարկութիւնը. — կա՛ն խորհողներ որ պէտք չեն տեսներ թարգմանութիւններու, քանի որ՝ կ'ըսեն, օտար լեզուներ ա'լ ընդհանրացած են Հայոց մէջ, ասոնք կրնան ուղղակի իրենց ընագիրներովը ճանչնալ օտար հեղինակները. իսկ անոնք որ լեզու չեն գիտեր, ըսել է որ պէտք եղածին պէս զարգացած չեն, հետեւաբար օտար հեղինակներու հայերէնէն ալ բան չեն հասկնար:

Ընդհանրապէս, ժողովուրդին միտքը զարգացնելու ամէնէն գործնական միջոցն է թարգմանութիւնը: Օտար լեզու չգիտցող ժողովուրդը պէտք է որ իր հասկցած լեզուով կարգայ օտար հեղինակները եւ զարգանայ. լեզու գիտցողներուն համար մնաւ շնորհ մը պէտք չէ՝ ըլլայ ընդհանուր գրականութեան հազորութիւնը: Մենք նոյն իսկ ընագիրը հասկցողներու համար մեծ առաւելութիւններ կը տեսնենք հայացումներու մէջ. կատարեալ գիւրութիւն մըն է այս անոնց մամար: Ասիկց զատ նախ Հայերը, — պէտք չէ՝ մոռնալ որ մասնաւորապէս Թրքահայոց վրայ է խօսքը, — կը ցուցնեն որ լուրջ եւ անուցիչ գործերէ սկսած են համ առնել. երկրորդ, հայերէն լեզուն իր ճիւղն եւ գերահաղորդ յատկութեամբ կ'ընդգրկէ ամէն նիւթ ու ամէն ճիւղ եւ այսպէս կը ճօնանայ ու կը կատարելագործուի. երրորդ՝ ընթերցասիրութեան կերպարանքը կը սկսի ընդհանուր եւ կենդանի ճառագայթումներով յօսարկից նշաններ տալ օգտակարութեան, հասկցողութեան եւ զարգացման: Ասոնք առաւելութիւններ են գրականութեան մը համար. ասոնք կ'օժանդակեն բնիկ եւ հարազատ գրականութեան մը հաստատուն բարգաւաճմանը:

Մենք նոյն իսկ մեր դպրոցներու յառաջգիւրութեան, եւ հսկայաքաղ յառաջգիւրութեան պայմաններէն մէկը պէտք է տեսնենք օտար գրականութեան հայացումին մէջ. Լեզուներու խճողում, մանաւանդ ուսուցանելու դժուարութիւն. ինչ անգին եւ երկար ժամեր յատկացուած չեն լեզուներու համար. եթէ հայերէն չինուէին ա'յն շատ մը դասագրքերը, որոնք չունին հայերէն, ուսանողները առնուազն հարիւրին 60—70 պիտի շա

նէին ուսում տորւելու մէջ . իր հասկացած լեզուով աւելի շուտ կ'ըմբռնէ աղան իրեն ըստածները : Հայ ուսանողին մտաւորական ցոլերը ցրուած են , կեդրոնացած չեն : Հայ ուսանողը թէեւ իր ուշիմութեան եւ աշխատասիրութեան շնորհիւ կը յաղթէ դժուարութեան , լայց շատ ալ կը առւժէ : Անշուշտ ասկից չհետեւիր թէ օտար լեզուները պէտք է վերցնել դպրոցներէն : Երբե'ք , Սա միայն ինչ հետեւի թէ մեր դպրոցներու մէջ լեզուն լեզու ուրվեցնելու համար պէտք է հարկադրուի եւ ո՛չ քե ուսում ուրվեցնելու համար : Ահա՛ լազմակողմանի պէտքերու շարք մը Թրքահայոց արդի գրականութեան համար , որոնց զանցառութիւնը կը սպաննէ բարգաւաճման ջիւղերը :

Գ.

Երբորդ՝ Հայոց բնիկ եւ հարազատ գրական արտադրութիւնը , Եթէ մէկ կողմէն Հայոց բնիկ գրականութեան ուսումնասիրութիւնը եւ վրաս կողմէն օտար գրականութեան հայա-րումը անհրաժեշտ պէտքեր են մեր գրական կեանքը ճշտացնելու համար , պէտք է որ այդ գրական կեանքը իսկապէս բնիկ ըլլայ Հայուն եւ հարազատ : Անտարակոյս , մե-րուն ամէնէն ճիշդ օրինակ մը պիտի ըլլայ հոս՝ իմ շեշտած գրական կեանքը կազմու-համար : Մեզուն յոգնիլ , պարտասիլ չգիտեր . ամէն ծաղկի վրայ կը թռչի , կը թռչի , կը թռչի , կ'ընկուղէ , կ'ընկուղէ անոնց նիւթերն ու հիւթերը եւ այս անձանձիր աշխատու-թեամբ կը շինէ մեղրը եւ կը զետեղէ հաշու-ն : Հախակցութեամբ յօրինուած խորիւսի մէջ , եւ ո՛չ ոք կրնայ ըսել մահկանացունե-թէն թէ լաւ շինուած մեղրի մէջ այսինչ եւ այնինչ ծաղիկներուն հիւթերը կան . որով-հետեւ մեղրը ա՛լ ըստ ինքեան նոր նիւթ մըն է , մեղրելին բնիկ եւ հարազատ աշխատու-թեան հիւթն է : Երբ օտար գրականութեան հայացումը պայման կը դնենք գրական բար-գաւաճման , Հայոց հին գրականութեան ան-հրաժեշտ ուսումնասիրութեան հետ , այս աշ-խատութիւններուն արդիւնքը պէտք է ըլլայ մեր բնիկ եւ հարազատ գրականութեան ըն-թեր մեղրը :

Բազմերանգ եւ բազմադոյն ծաղիկներու

գրական զաշտերն ու հովիտները կան , ու-տերն ու ապիւրը կան , գուլալ առուակնե-րու ափեր ու օտարն եւ կամ կորդ գիրքեր կան , կան նաեւ ածուներ ու մաշարաներ , իրարու մօտ , իրարմէ հեռի , ամէնուն վրայ ալ ծաղիկներ կան . գրագէտը վազելու , վազվազելու է անոնց քովը , անոնց վրան իր բնիկ ու հարազատ մեղրը շինելու համար՝ իրեն յատուկ արուեստով ու սաղանդով :

Բնիկ եւ տոնիկ գրականութեան վերա-ծնութիւնը , ուրեմն , անխոնջ աշխատու-թեան , մա'նաւանդ հանդարտ եւ բեղնաւոր աշխատութեան մը կը կարօտի : Եւ սակայն Թրքահայոց արդի գրականութեան մէջ չկայ այս աշխատութիւնը :

Անգրագութեան , գոր օրինակ , Պոլսի լրագրութեան վրայ , քանի որ այն կը ներ-կայացնէ արդի գրականութիւնը Թրքահայոց մէջ , Ի՞նչ կարելի չէ՞ մատնանիչ ընել առաջին նայուածքով . նախ միօրինակութիւնը , որ կը տիրէ գրեթէ լրագրական համայնքի վրայ : Եւ ետքը՝ որոշ եւ հաստատուն ճիւղ մը , սկզբունք մը՝ մշակող լրագրիւր ո՞րն է : Կա-րելի չէ՞ որ գրականը , գիտականը , կրօնա-կանը , քննադատականը եւայլն եւայլն զատ զատ օրկաններ ունենային : Ամէնքը միեւ-նոյն գետինը , միեւնոյն հողը կը մշակեն . եւ այսպէս մշակուած հողը կը կորսնցնէ իր բեղնաւորիչ ոյժը ,

Ստաց է որ օրը օրին պատրաստուող լայ-նածաւալ թերթերը՝ լեցնել զիւրին չէ՛ աշ-խատուած նիւթերով , մանաւանդ մեր մէջ , ուր ամէն մարդ գրող է : Բայց քանի որ ա՛յնպիսի նիւթեր կը հիւրընկալուին թերթե-րու մէջ , որոնք աշխատութիւն կ'ուզեն , պէտք չէ՛ որ գրուին վայրկեհապէս , կամ գրուին գրուած ըլլալու համար :

Լրագրութիւնը կրնայ , իրաւի , բարձրա-նալ գրական մակարդակի մը՝ եթէ ըմբռնուի գրականութեան նշանակութիւնը : Պէտք չէ՛ թողուլ որ գրականութեան ամբողջական ըմբռնումը բխանայ . պէտք չէ՛ որ պարբերա-կան նոյնութիւններ եւ նոյն իսկ տարօրինա-կութիւններ ախօսեն գրական կեանքը : Անի-կա հաստատուն , հարազատ պէտք է ըլլայ : Շա'տ նիւթ , կարծուածէն աւելի չա'տ

նիւթ կայ գրելու եւ հրապարակ բերելու համար. որովհետեւ այնքան շատ են ժողովուրդի մը կեանքին կողմերը : Մակերևութային հպումներով չքրքրուիր այս բանաւոր զանգուածին ալքն ու խորքը , ո՛չ ալ տեղ տեղ պեղումներ ընելով . կանոնաւոր , մէթօտիք աշխատութեամբ միայն կրնայ գրականաւոր այդ կեանքը :

Բանաստեղծութիւնը , այս ամենէն շատ ժպտող ճիւղը գրականութեան , այսօրուան արտադրութիւններուն նայելով բառգիրքներէն ընտրուած գեղեցիկ բառերու հոյլ մըն է . իսկ քերթուածը , կամ սովորական խօսքով՝ ոտանաւորը՝ յանդաւոր բառերու համարանք :

Երգիծարանութիւնը , ժողովուրդը կրթող, ազդեալէս հրահանգող այս ճիւղը գրականութեան , կարծես սրտած ու գոտած է Հայոց գրական կեանքին : Մերթ ընդ մերթ փողոցային խօսակցութիւններ են որ իբր երգիծանք կը նուիրուին ընթերցողներուն :

Քննադատութիւնը , ա՛հ , այս անկեղծ բարեկամը ամէն մարդուն , ամէն գործին , որ չինելու , ուղղելու , առաջնորդելու , մէկ խօսքով հեղինակօրէն ազդելու բնութիւն մը ունի . այսօր պարզ խճրճանք մըն է , շատ անգամ ալ յայտնի հայհոյանք մը :

Գրականութիւնը , հայերէն ոճը , գրողը ինքն է հիմայ , ճիշդ Պիւֆֆօնի տուած սահմանին պէս : Այսօրուան գրականութեան մէջ ամէն գրող իր ոճն ունի . միայն հայերէնը չունի : Մտքուած է կարծես սա սկզբունքը թէ գրելին է գրել ո՛ր եւ է նիւթի վրայ , բայց գծուար է հայերէն գրել : Հայերէն բառերով գրուած ամէն բան հայերէն չէ՛ . ո՛չ ալ ամէն հայերէն՝ գրական հանգամանք մ'ունի : Բաւական չէ՛ , ուրեմն , նիւթ ընտրել , հայերէն բառերով գրել անոր վրայ եւ հայերէն գրել , այլ մա՛նաւանդ պէտք գրական հանգամանքով , գրադէտի գրչով օժտել զայն :

Ստոյգ է որ ամէն նիւթ իր ծանրութեան համեմատ ոճ կը պահանջէ . կարելի չէ՛ որ միեւնոյն չրջանակի մէջ կաշկանդես , պրկես ամէն նիւթ . բայց կարծես թէ այս շատ բնական օրէնքը կը բռնաբարուի այսօրուան գրականութեան մէջ :


Ա՛լ պիտի չշարունակեմ՝ քուռումն մատակցը , եւ պիտի դիտել տամ ընթերցողներու թէ երբ մտանանիչ կ'ընեմ Թրքահայոց գրականութեան այսօրուան ընկած , տափակցած վիճակը , չեմ մոռցած ա՛յն գրադէտ զէմքերը , որոնք միշտ բախտաւոր եղան փայլեցնելով իրենց գրիչները եւ կը փայլեցնեն դեռ : Հարկ չկայ որ անոնց անունները չարեմ այս տեղ . քանի որ նպատակս է ո՛չ թէ մեր առաւելութիւնը ներկայացնել , այլ մեր թերութիւնը երեւան բերել , թերութիւն մը , որ ապականած է այսօրուան գրականութիւնը : Ես նոյն իսկ պիտի չտամ այս տեղ անոնց անունները , որոնք միթաթիւ , թարմ ոյժեր են հիմայ մեր գրական վերածնութեան համար :

Թրքահայոց գրականութեան այսօրուան վիճակը , ինքնին պիտի լուծէ վաղուանին խնդիրն ալ : Այն պայմանները , զորս ես մտանանիչ ըրի , եւ որոնց գործադրութեամբ միայն ժողովուրդի մը գրականութիւնը կը կատարեալագործուի , ա՛յնքան կը ճշգրտէ գրականութեան նշանակութիւնը որ Պոլիս կամ գաւառ մասնաւորապէս պատասխանատու չեն մեր գրական կեանքի բարգաւաճման խնդրին մէջ . այլ պատասխանատու են ամէնքն ալ իրենց միջոցներուն եւ դիրքութիւններուն համեմատութեամբ : Թողածիս սկիզբը չեղանցի թէ գրականութիւնը ժողովուրդին կեանքն է . այդ կեանքը՝ ուր որ կայ պէտք է արտափայլի , երեւան դայ իր գրականութեան մէջ , անցեալովը , օտար գրականութեան հետ իր ունեցած անխուսափելի յարաբերութիւններովը , իր մարդկայնութեամբը եւ ասոնց ամէնուն հետեւանքովը : Այսինքն՝ իր բնիկ , տոհմիկ , հարազատ գրականութեան վերականգնումովը . առողջ , անթերի , աւելական ու հիանալի :

ԲԱՅԳՎԵՆ ՎԱՐԳԱՊԵՏ

ՎԵՐՋ

Առխարհաբար Նարեկեմ ետքը , կարգը եկած է Շաքալանի աշխարհաբար թարգմանութեան զոր կատարած է Երուանդ էֆ. Տէր Անդրէասեան : Այս երկասիրութիւնը մօտ օրէն հրապարակ պիտի երնէ առանձին հատորով :



Գիշերուան բուռնով, հանդարտ ու խորին,
Գիւնով կնկան պէս պառկեալ է ծովը .
Լուսինն ալ, ոսկի իր շողերովը
Ղենջակ կապած է անոր մերկ փորին :

Եւ այնքան հեշտանք տուած է չորս դին
Ծովը՝ պշրանգով հրապոյրով նոր,
Որ կուգես նետուիլ ծոցին մեջ անոր
Գտնելու յոյսով գաղտնիքն անդունդին :

Սերն ալ ծովուն պէս իր գաղտնիքն ունի,
Հրապոյր կայ հոն : Երգն է բռնունի
Որ կ'արձագանգէ տեղին անձանքին .

Եօրը գոյներով ծիրանի-գօտի
Կը դիւքէ աչքը երբ կ'արցունգոտի
Հոս երազ է լոկ, պատրանքն է անդին :

ՏՕՄԻՆՕ

ՏՈՒՆԻՍ ԺԱՄԲԱՆ

— ԶԵՆԻՏ —

(ՊԶՏԻԿ ՆԻՇԵՐ)

Բ.

Հոկտեմբ. 31

Կառքով կը հեռանամ Սամսոնէն : Յուրա
մէռչողտ օդ մը որ մինչեւ աչքերուդ մէջը
լինքները զգալի կ'ընէ, վերէն վար հալող
վերին հետ կը յիշեցնէ ինծի երկարատեւ ու
համաման ձմեռները իմ բնագաւառին, ձիւնի
ձերի ձերմակ կեանքը զոր կարօտցած ալ եւ
կրմակ քանի՜ տարիներէ ի վեր :

Ու կառքիս մէջ մինակ, վերմակովս
գունատ մը կծիկ եղած՝ տիրող ահարկու լռու
թեան մէջէն աչքերս կ'երկընդուն գոտացած
լեռներուն, ուր դեղին վառտ տերեւաթափ
մը իր նեխած անկողինը հեռուն, շատ բա
ւերը տարածած է կաքաներու պզտիկ տու
ներուն քովէն մինչեւ առուններու ափերը :
Բնութիւնը իր ամայութիւնը կ'երգէ հիմակ,
վերջացող աշունին երգերը որոնք մեղամաղ
մութիւն կը բուրին :

Ճամբաս շատ երկար է մինչեւ տուն :

Օրերով ու շաբաթներով պէտք ունիմ շա
րունակելու այս թաց օդին, ատոր համար
սակայն անհոգ կեցուածք մը ունիմ : Տակա
ւին արտօրանքի տագնապը չկայ մէջս որ իս
խառնէր անհանգիստ ընէր, որ դուրս նետէր
սակայն կառքէն՝ վայրկեան մը առաջ համ
բուրելու համար սիրելիներ : Ու միտքս
կ'անդրադառնայ հէգ մայրերու վրայ, կարօ
տով հալումաշ եղող կիներու որոնք երկա՛ր
տարիներէ ետքը վերադառնալու եղող զա
ւակներու կարօտը կը քաշեն ու կը մեռնին
անտես :

Կառքս քիչ երեւէջներ կ'ընէր թէեւ ան
հարթ գետին վրայ, բայց դոնէ սա միւի
թարանքը ունիմ որ ծովերուն լոյծ յատակին
վրայ չէր որ դրած ըլլայի բախտիս նաւը,
դոնէ հաստատուն գետին մը ասիկա՝ որին
կրնաս թեւդ կռթնցնել՝ եւ ուր կրնայ թա
ղել իր փափուկ փետուրն ու ոսկորները՝
նեաահար թռչունը :

Իրիկունը կը մնանք պանդոկ մը, ուր
չհաւտալս եկաւ երբոր ինծի տարին բաւա
կան մաքուր սենեակ մը, ուր պիտի ունե
նայի նաեւ երկաթ մահճակալ մը :

Նոյեմբ. 1

Բեռի ու ճամբորդի հարկւրաւոր կառքեր
երեւակայեցէք որ առտուն մութիւնը տուն
տարբեր պանդոկներէ ծայր կուտան դէպի
Սամսոն ու Սեբաստիա՝ իրենց ճամբան շա
րունակելու : Անկարելի է հեռուէն երեւա
կայել վաճառականական ամէն կարգի ապ
րանքներով ծանրաբեռնուած կառքերու այս
անարկու իրարանցումը : Ասիկա է սակայն
ամէն օրուան կեանքը, առանց պզտիկ կայք
մը առնելու որ եւ է եղանակի մէջ :

Պահ պահ համրիչի հատի պէս ցանցնուած
տուներ ու գիւղակներ կը ցցուին դիմացս
լեռներուն կուշտն ի վեր, որոնց մէջ մաքուր
ներկուած տուներ կը միմիարով ծածկուած
տանիքներին կը ցուցադրեն քաղաքներու
յատուկ հով մը տարադիւրով կարծես շուրջի
աննշանութիւններուն վրայ : Ու ինծի մտա
ծել կուտան առոնք միմիակուկ ու հովիտին
էկանքը սիրող բարեկեցիկ ընտանիքներու
վրայ որոնք մօտի քաղաքներուն խռնուած
օդն ու կեանքը մերժած՝ հոս սա վայրերը

նախընտրած են : Վերջապէս խալիզա կը հասնինք, — մէկը այն շատ չէն գիւղերէն որոնք երթալով քաղաք մը ըլլալու կը միտին :

Այս իրիկուն մեր գիշերելիք տեղը հոս է : Քանի մը հարիւր տուներ աչքի կը հանդիպին , խոշոր , կանոնաւոր շինուածքներ որոնցմէ ոմանց վրայ ալ ծանուցումի տախտակներ կը տեսնեմ երկու երեք լեզուներով գրուած :

Երկու օրէ ի վեր չկրցեր էի տաքուկ ապուր մը դնել բերանս : Հոս ճաշարան ալ կայ , ու չէնքով շնորհքով խանութներ :

Ու հիմակ որ կրակարանիս վրայ թէյիս ջուրը կ'եռայ ու շոգին ֆըշ ֆըշ վեր կը նետուի , ըսեմ անմիջապէս որ թէյն ալ գիժացը խանութէ մը առի , հարկաւորապէս Իսագուրեան-Շավրուեան ընտիր թէյը չէր փընտրածս :

Ականջս հայերէնով բառեր կ'իյնան , առուտուր ընելու պատճառով ներս կը մտնեմ խանութէ մը : Յիսուն տունի չափ Հայեր կան եղեր հոս , ժամն ու պատարագն ալ տունի մը մէջ կ'ընէ եղեր իրենց բարի աչքերը՝ Զննոր քահանան : Յոյներ ալ չպիտի պակսէին բնականարար :

Բայց խալիզա իր հոշակը հանած է՝ տաքուկ ջերմակներովը ուր հիւանդ առողջ դրացի քաղաքներէն կը ժողովուն բուժուելու համար : Պրուսայի ջերմակներէն ետքը այս երրորդն է զորս ճանչցած ըլլամ ամբողջ Թուրքիայի մէջ . միւսներէն մէկը Հալէպի ճամբուն վրայ , իսկ մնացածը Տիարպէթիլի մօտ Զերմուկ քաղաքը :

Առտունն արշալոյսով Ամասիայի կը պատրաստուիմ :

Նոյեմբ. 2

Ամասիան հեռուէն Դամասկոսի տպաւորութիւնը կը թողու վրաս իր իսկ հնութեամբը , դեռովը ու ծառուտ պարտէզներովը : Գրգըլ ըրմագ՝ քաղաքին մէջէն կերկընայ կանցնի , որին վրայ բաւական մը հեռուէն ալիւրի գործարաններ շարուած կան մինչեւ քաղաքին մէջը :

Սքանչելի դիրք մը ունի սակայն Ամասիան . զինքը չընդերող բլրակներու կուշտէն սկսելով դէպի ձորակը իրար գրկած են տու-

ները , բոլորն ալ չէնք շնորհք ու կանուսուոր :

Երեք օրերէ ի վեր ճամբան՝ պտնդոկնէրու մէջ գրի առած նօթերս հիմակ հոս՝ Ամասիայի մէջ կը վերջացնեմ , բան մըն ալ անոր վրայ ըսած ըլլալով թղթատարին յանձնելու համար :

Ինչ որ սակաւին իս պիտի հետաքրքրէր Ամասիայի նկատմամբ , կիսատ կը թողում առաջիկային համար :

Նոյեմբ. 3 (*)

Ժիր ու գործի աէր մարդիկ են Ամասիայի Հայերը : Հոս իրենք քանի մը հազար տուն մը կը հաշուուին . Իրրանոսեան վարժարանը եւ միւսները իրենց քիչ շատ կարգ կանոնաւորութիւնովը լաւ դադափար մը կուտան այցելու հետաքրքիրներուն :

Առտունն սքանչելի արեւ մը ունինք . Ու քաղաքին հէնց կռնակէն պարտէզներու չըթայաւորումովը կը հեռանանք անկից դէպի մեր ճամբան , Վայրկեանները շատ շուտ ժամերու կը փոխուին , ու աչքիդ առջիւն փախ տուող ծառերուն ու ձիւնապատ լեռնադադաթներուն հետ մտածողութիւններու արագ ու իրար աջորդող շարքերը կուգան կը խոնուին զուլիս մէջ , որոնցմէ չեմ կրնար խոյս տալ սակայն : Ծառ անդամ կտրքիս անճոռնի եւ ցնցող մէկ պոռթկումը կ'ընդմիջէ իմ խաղաղ երազներս , որոնք միշտ կուլթեանս մէջ ամէն կողմ կը թռչին : Գրական լրագրական անցքերուն կ'երթայ միաքս լսլորովին ակամայ , ու դեռ չեմ մոռցած դեռ մէկ երկու շարաթ առաջ անհիթի խճճանքը Առեւտրերին որ ըրած էր Ա. Մամուշի մէջ «Յանկայի վերադարձը» խորագրով իմ մէկ յօդուածիս առիթովը : Ու դեռ չկրցած ըլլալով որոշել որ կարժէ՞ր պատասխանել , պէտքը կա՞ր , ընել խօսքեր որոնք ո՛վ գիտէ կրնային տեղի տալ վաթսուանակն թուակոմներու կրօնադաւանական բանալիներուն , վէճե՞ր . . . համոզումներ՝ որոնց դաւանողներուն ոչ կը ներեմ ես , ու ոչ ալ կը զիջանիմ դէմ գիմաց գաւառիլ ու լրագրա-

Ծ. ի. — Այս յաւելումական մասը ստացանք յաջորդ նամակով մը, զոր կցեցինք առաջին մասին :

կան վիճարանութեան անունովը խօսք տալ ու առնել : Ու կը սիրեմ մոռնալ ամէն բան որ ազել էր :

Եւգրիկա չենք դեռ , այժաք է գիշերել կողնիներով չըջապատուած ձորակի մը պանդոկը : Ու տարօրինակ , ինծի կը յատկացնեն ճիշդ այն նոյն սենեակը ուր Խարբերդցիներ խումբերով եկած անցած են , որոնց անունները կարճ յիշատակութիւններով սեւադրուած կը տեսնեմ մատիտով պատին ճերմակութեանը վրայ : Ամերիկա գաղթողներ կամ Ամերիկայէն դարձողներ են բոլորն ալ : Աւասիկ մէկ երկու նմոյշներ իրենց իսկ ուղղադրութիւնովը .

«Մինակ իրեք հոգի էաք , Խարբերդ ձգէցաք դէպի Ամէրիքան գնացաք . 1902 սէկտեմբեր 27» :

«Հոս էկանք եւ մէկ գիշեր իջեւան ըրինք , Տէրը կամենայ ասկէց Ամերիկա պիտի մեկնինք . Խարբերդ , Հիւսէյնիկցի » :

Եւ ուրիշներ որոնք պանդխտութեան այդ նոր Աշխարհէն վերադառնալին կը պատմեն : Ահա՛ .

«1900 յունիս 1 եկայ կէրթամ դէպի ծննդավայրս , 17 ընկերներով , Ա. Պետրոսեան , Խարբերդ-Բէշլէնցի» :

«1900 մայիս 10. եկայ դէպի երկիր կերթամ , Յով. Խարիբեան , Խարբերթու Սօրսուրի գեղացի» .

Ու կ'երկարի տակաւին այս շարքը կենսադիր պատմուածքներու , ու անգամ մըն ալ աչքիս առջեւ կուգայ գիւղացի գործաւորներու այս դասակարգը որոնք հեռո՛ւն հեռո՛ւն կը թափառկոտին , հարկաւ օր մը խալտոտ աչքերով տուն , պապանական երգիք վերադառնալու համար : Ու մտածումը կը տանջէ իս հիմակ : Կը ձգեմ :

Ճրագիս աղօտ լոյսը վերջին պլպլուքը կը համբէ . ու ես կ'ուզեմ հանգստանալ օրուան լոյնութիւններէս :

ԽՈՍՐՈՎ ՔԷՇԻՇԵԱՆ

Կասաբլապէս բմբոխնել տալու համար մեր բնօրհնողներուն՝ այն սիրուն բռնիկը զոր Բրիգանթեմ նուիրած է ամուսնական դժբաղդութեան մը , հարկ կը տեսնեմք արտասպել նախ նամակ մը որ վերջերս հրատարակուեցաւ Մանգրումէի մէջ եւ որուն բնօրհնումը ներշնչած է մեր սրամիտ ու զուարթախոն աշխատակցին՝ կարգ մը խորհրդածութիւններ , causeries ձեւով :

«Ստորագրեալս բնիկ Պօլսցի , որդի Պետրոս Մազմանեանի , թուականէս 5 տարի առաջ Կ. Պօլսոյ Սկիւտարէն օրիորդի մը հետ ամուսնացայ — դուստր Տիգրան աղա Սարաֆեանի — փոխադարձ հաճութեամբ : Այր եւ կին մէկ տարի սիրով կենակցելէ յետոյ տիկնոջս մայրն եւ քոյրը Պօլս մեզի այցելելցին եւ ըլանով մը — զոր չի կրցի հասկնալ առաջուց — իբր օղափոխութիւն առին տիկինս եւ միասին Պոլիս տարին : Ամիսներ անցան ու ես ո եւ է լուր չստացայ կնոջմէս . ուստի քանի մը անգամներ զրեցի եւ հրաւիրեցի զինքը , սակայն միշտ ժխտական պատասխան ստացայ : Դանի մը հեղ ալ տեղիս թաղ. Խորհուրդին միջոցով Պատրիարքարան եւ Առաջնորդարան զիմեցի , բայց միշտ պատասխան չստացայ :

«Արդ , նկատելով որ 4 տարիներէ ի վեր հակառակ այսքան հրաւերներու , թախանձանքներու , զիմուններու թէ՛ իրեն , տիկնոջս , եւ թէ՛ առ որ անկ է , ո եւ է արդիւնք կարելի չէ եղած առաջ բերել . մէկ խօսքով կինս ինծի չէ՛ յանձնուած , այլ եւս յուսահատ եւ ճարահատ պիտի պարտաւորիմ զիմել յոյն կամ պապական կղերին , որպէս զի կարենամ ամուսնանալ , ըստ օրում երիտասարդ եմ եւ պէտք ունիմ ամուսնանալու : Աւելորդ չեմ համարիր յիշել թէ , մինչեւ վերջին օրերս նիւթական ամէն պարտականութիւն կատարած եմ կնոջս հանդէպ , եւ պարտականութիւն ունիմ ճակատադրային ամէն դժբաղդութեան տուալ առանց սակայն աննպատակ զրկանքի եւ լքումի . հիւանդութեան եւ անոր նման դանադան պարտքաներ տարբեր են , պարզապէս փախչիլ ու իր ամուսինը լքել տարբեր

է։ Այս տեսակ պարագայի մը ինչպէս տոկամ
եւ անձնագոհութեան գաղափարն ունենամ ։

«Ուստի իրերու այս վիճակին մէջ , ամէն
պատասխանատուութիւն կեդր. վարչութեան
կրօնական ժողովին կը թողում , եթէ երբեք
հակառակ պարագային , այրած սրտիս իրա-
կան դարման մը տանելու շնորհին չարժա-
նացունէ զիս ։ »

Մնամ

ՅԱԿՈԲ ՄԱՋՄԱՆԵԱՆ

Պօլս , 10 Հոկտ. 1902

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԵՆ

Եւ Յակոբ Մազմանեան կայր ի սուգ ան-
մխիթար ընդ չու . . . Տիգրան Սարաֆեանի
աղջկան . . . :

Դպրոցէ ելլալէս ի վեր — եւ ասիկա երէկ-
ուան բան չէ — առաջին եւ միակ անգամն
է որ կ'օգտուիմ Տեղեւաբէն որ՝ հակառակ
չորս լեզուով թարգմանած ըլլալուս , միակ
գիրքն է զոր մինչեւ ծայրը կարդացած չեմ ,
ըլլա՛յ դպրոցին մէջ , ըլլա՛յ անկէ դուրս ։
Իրաւ է որ այդ թուականէն մինչեւ հիմայ ,
մէկէ աւելի Բալիփոստերու պատմութիւններ
ունեցած եմ , եթէ ոչ բարձիս տակը , գո-
նէ . . . բարձիս վրայ ։

Բայց խնդիրը հոգ չէ ։

Ֆենելոնի այդ գլուխ-դորձոցէն տեսած
օգուտս սա՛ է թէ՛ անոր առաջին երկու տո-
ղերը խիստ à propos միտքս կուգան դասա-
կան սկզբնաւորութիւն մը տալու յօդուածիս
ուր սակայն պարզուած պիտի տեսնէք պատ-
մութիւններուն ամենէն banalը ։

Յակոբ Մազմանեանի մը կնիկը — ինչպէս
Մանգուսիի էփեսարի մէջ կը գրէ այդ
կնակորոյս Պօլսցին — մինակ տարի մը
իր ամուսնական պարտականութիւնները կա-
տարելէ ետքը կ'առնէ կը քալէ եւ . . .
se met à faire l'école buissonnière, բա-
ցատրութիւն մը զոր Ֆրանսերէն լեզուով
գրելուս համար մի՛ քաջըջէք զիս , ո-
րովհետեւ դուք ալ ինծի պէս գիտէք թէ
Սահակ-Մեսրոպի ժամանակները այդ տեսակ
բարքեր չի կային , այս տեսակ բացատրութեան

մը հայերէնը գտնելու պէտքը զգալի ընկ
տալու համար ։

Ոչ առաջին եւ ոչ ալ վերջին անգամն է
որ կին մը կը լքանէ իր ամուսնական յարկը ,
բայց չեմ գիտեր ինչու զիս այսքան կը յուզէ
եւ սիրտս կտոր կտոր կ'ընէ այդ Պօլսցիին
ողիսականը ։

Նոր Սկանարէլ՝ խեղճ մարդը իր հրատա-
րակած սողերուն մէջ այնքան պարզութիւն ,
այնքան անկեղծութիւն եւ տեսակ մը այն-
պիսի միամտութիւն դրած է որ , ուզես չու-
զես կարգահաւաստ վրան , կը մեղքնաս զինքը
եւ կը ցաւիս որ ձեռքէդ բան մը չի գար՝
բայնէն խոյս տուող այդ տատարակը Պօլս
վերագրածնելու համար ։

Հազիւ մէկ երկու անգամ լզուբաւոր չա-
քարի կտորը ձեռքէն խլուած տղու մը պէս՝
աղի աղի արցունք կը թափէ կոր հէգ մար-
դուկը եւ գրաւ կը դնեմ որ՝ Պօլսն չի հաւ-
նող եւ Իւսկիւտարէն աղջիկ առնող Մազ-
մանեանը , այս պահուս սրտաբեկ վիճակի մը
մէջ կը գտնուի , կեանքէ համ չառնել , ար-
եղերքին աչք չունի , աշխարհք նեղ կուգայ
իրեն եւ . . . անկողինը լայն ։

Բանի որ Յակոբ Մազմանեան դառնաց-
եալ սրտով եւ մեղի անձանօթ նպատակով մը
գուցէ , իր վիշտը հրապարակային կ'ընէ եւ
չորս տարիներէ ի վեր մաղ-մաղ կրակի վրայ
տապկուած սիրտը մեզի կը բանայ — նամակը
աչքիս առջեւն է — կարծեմ թէ ամէն Հայու
պարտականութիւնն է բաժին մը ունենալ իր
այդ ցաւէն եւ ամէն հայ հրապարակագրի
պարտքն է իր ուշադրութեան առարկան ընել
Պօլսի այդ ամուսնական միջադէպը եւ դար-
ման մը փնտռել այդ կնակորոյս ամուսնոյն
վշտերուն , քանի որ այդ մարդուն զլխին
եկածը ապահովապէս շատ ծանր է եւ հաւա-
նարար երկասյրի ։

Արդ ներեցէք ինծի , սիրելի Մազմանեան ,
իրեւեւ ամէնէն խղճամիտը եւ կարեկիցը հայ
գրողներուն , ամէնէն առաջ ես փութամ ձեր
քովիկը դա՛լ՝ գլուխ զլխի տուած փնտռելու
համար լաւագոյն միջոցը որով կարելի ըլլայ
փրկել կացութիւն մը որ , կ'երեւակայեմ ,
չառ ախորժելի ըլլալու չէ ձեզի համար որ
թէ՛ երիտասարդ էք , թէ՛ կարգուիլ կ'ուզէք

եւ թէ՛ ամէն նիւթական միջոցները ունիք :
Այս ամէնը կարգացի ձեր նամակին մէջ :
Ես չեմ պատկանիր այն աշխարհին ուրկէ՛

ներս մտնելու համար մինչեւ Իւսկիւտար դա-
ցած էք դուք . աշխարհ մը ուր տարի մը
միայն հեշտօրէն հիւրասիրուելէ ետքը , յան-
կարծ դուրս կը նետեն զձեզ . . . en vous
mettant dedans , եւ երբ վերստին ներս
մտնել կը փորձէք , այդ մուտքի դուռը դոց
կը դառնէք ձեր առջին՝ ձեր երեսմինի կնոջ մէկ
քանահաճոյքին բերմամբ :

Դարձեալ ձեր նամակէն կը քաղեմ այս
մանրամասնութիւնները :

Արդ՝ ամուրի ըլլալուս , թերեւս կը կար-
ծէք որ կին ըսուած արարածը անծանօթ բան
մըն է ինծի համար եւ ուրիշ բան չի
մնար ինծի բայց եթէ կրկնել Պէնժամէն
Պարպէի սա տողերը .

Pourquoi me demander ce que c'est qu'une femme,
A moi dont le destin est d'ignorer l'amour!
Ah! d'un aveugle-né vous déchiriez l'âme,
Si vous lui demandiez ce que c'est qu'un beau jour.

Իրա՛ւ , կարգուած չեմ , բայց ասիկայ
պատճա՞ռ մըն է որ կին էակը անծանօթ մնայ
ինծի եւ չի կրնամ տեսակ մը հեղինակու-
թիւն ունենալ կանացի եւ ամուսնական հար-
ցերու մէջ :

Պարպէի պէս կուսակրօնութեան ուխտ
չեմ ըրած ես :

Եւ յետոյ , ի՞նչ , կը կարծէք թէ ամուս-
նութեան ինչ ըլլալը գիտնալու համար մարդս
անպատճառ կարգուած ըլլալու է :

Տեսէ՛ք , ես թուարանութիւն սորված եմ
եւ չորս գործողութիւններուն ինչ ըլլալը ձե-
զի չափ եւ թերեւս ձեռնէ աւելի լաւ գիտեմ
առանց սակայն հինգ փարայ տուած ըլլալու
թուարանութեան որ եւ է գրքի : Հրաշք մը
է ասիկայ . Դպրացի մէջ թուարանութեան
դասի ընկերներս աջէն ձախէն փոխ կուտային
ինծի իրենց գասագրքերը : Կրցա՞յ հասկցնել :

Կինը՝ ո՛վ կնակորոյսդ Մազմանեան , որ-
քան պաշտելի նոյնքան դարհուրելի էակ մըն
է որ չի բացատրուիր , չի հասկցուիր , չի
գլխուրի եւ որուն սակայն կարելի չէ զի-
մանալ . ինծմէ զատ ուրիշներ ալ ըսած են
ասիկա եւ իբրեւ աղացոյց այս ճշմարտու-
թեան , ահա՛ ձեր գլխուն եկածը :

Չարժէր ուրեմն այդքան սիրտ հառցնել
եւ ձեր ողբերուն արձագանգը զրկել Պօլուէն
Պօլիս :

Կոնքուրի ըսածին պէս , « Կինը ի բնէ կը
սիրէ հակասութիւնները . շատ քացալուզ
աղցանները , կազեօզ ըմպելիները , օթեկ
որսեղէնները , տհաս պտուղները եւ . . .
ստահակները (mauvais sujets) :

Արդ , քանի որ ան չի սիրեր զձեզ —
ինչպէս կը դուշահուրի ձեր նամակէն — ադ
կը նշանակէ թէ դուք այս վերջիններէն չէք՝
Ասիկա բարենիշ մըն է ձեզի համար որ կրնայ
շատ մը համակրութիւններ հաւաքել ձեր
անձին շուրջը :

Աստուած զձեզ շատ կը սիրէ եղեր՝ եթէ
հաւատաք սա տողերուն , զորս ստորագրած է
Օրիորդ Տը Սքիւաէրէ որ ձեր Սկիւտարի
օրիորդին չի նմանիր :

Contre Job autrefois le démon révolté
Lui ravit ses enfants, ses biens et sa santé:
Mais, pour mieux l'éprouver et déchirer son âme,
Savez-vous ce qu'il fit? Il lui laissa sa femme .

Ես կը զարմանամ ձեր խելքին : Ասդին
ինչ ընելին չեն գիտեր իրարմէ զատուելու
համար , ամուսնալուծութիւն կը պոռան սա-
րիներէ ի վեր , Կրօնական Ժողովներու կը
գրին , Պատրիարքը կը տաղակացեն , Կա-
թոլիկոսին զուրկը կը ցաւցնեն , եւ դուք բաղ-
դին չփացած զաւակը , ոտքերնիդ գետինը կը
զարնէք եւ ընդհակառակը « կնիկս կուգեմ »
կաղաղակէք :

Ան ալ , Իւսկիւտարի բարձունքէն , — եթէ
երեւք հոն թառած է — քահ-քահ կը խնդայ
եւ իրաւամբ :

Իբր թէ այս եղածը՝ դաս մը չըլլար ձեզի ,
նորէն սիրտ ունիք կարգուելու եւ կարծելու
թէ յոյն կամ պապական եկեղեցիներուն
չնորհիւ կիները աարբեր կըլլան քան ինչ որ
են :

Ես ձեր տեղը՝ կիներուն անունը անգամ
բերանս չառնելու երդում պիտի ընէի :

ՌԻԻԶԱՆԹԵՍ

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ

ԱԼԵԿՍԱՆԵԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԻՅՈՎ

Իր համբաւի փունջը սկսելով կապել Գերմանիայի մէջ, Տիրան պէյ Ալեքսանեան, դեռաւոր թաւ-ջութակահարը, այսօր, երաժշտասէրներու շրջանակին մէջը, տիրացած է անունի մը, որ զինքը կը հանդիսացնէ Պոլիսի արուեստագէտներուն ամէնէն կարկառուն գէմբերէն մէկը :

Եւ ան ցանցաւ նուագահանդէսները, զորս այնչափ զլացարար, — տարին հազիւ անդամ մը, — կը սաքքէ պատանի արուեստագէտը, անոնցմէ են՝ որոնց նուիրական մատուցումով մը կը ըզձայ ու եւ է արուեստասէր ներկայ գտնուել, եւ որոնք չեն ճանչցած երբեք fiasco, հանդիսանալով Պոլիսի երաժշտական ամէնէն արժանիքոտ կազմակերպութիւնները եւ յաղթական յաջողութիւնները, զորս տեղական միջազգային մամուլը, ամէն անգամ, միահամուռ կերպով, իր երաժշտական եղաւկան եղելութիւններ արձանագրած է :

Ահա աս հրճուեցնող ճշմարտութիւններուն կատարեալ զիտակցութիւններովը եւ հաւատա՛տ համոզումովը է որ, երկուշարթի գիւշեր, միջազգային ճշմարտապէս հալ-ղայփական երկսեռ հոծ բաղմութիւն մը փութացած էր ներկայ գտնուել, երիտասարդ հայ արուեստագէտին կազմակերպած Նուագահանդէսին, խորապէս զիտակցելով անոր համբանքով շատ քիչ տարիքին մէջ մարմնացած իրապէս բարձր տաղանդին, եւ չղրկուելու համար նմանը այնչափ քիչ պատահող երաժշտական սարքումի մը ներկայութեան հաճոյքէն :

Ալեքսանեան եղական արուեստագէտ մըն է, եւ միանգամայն տաղանդ մը :

Ըմբոյնելու համար սակայն ամբողջ զինովցնող զիւթանքը այդ զմայլելի ձիւքերուն, պէտք է մօտէն տեսնել զինքը, իր արուեստագէտի վերացումներուն եւ անդուգական տաղանդին ճառագայթման վայրի վայրկեաններուն մէջ, երբ անհոգի թաւ-ջութակը

սրունքներուն մէջ պրկորէն սեղմած, եւ, հոգեւին ու մարմնապէս փարած անոր, նուիրուած, կը մաքաթի անոր հետ, կը մարտնչի, կը սպառնայ, կը սեղմէ ծունկերովը, գերադոյն ոգորումներով, — ճպոտին անբուսակայելի՛ կերպով արագ ու սպառնացող շարժումներուն տակ, — կատարեալ պատկերի մը պէս, ուր գաղան մը առած բլար ծունկերուն մէջտեղը, սպառնալով անոր, ճչել, գոռալ, մռնչել, մարտնչելով անոր հետ, վայրի ու անմարդակերպ կոխի մը մէջ :

Մարդ ան ատեն մինակ կրնայ գաղափար մը կազմել Ալեքսանեանի ճշմարիտ տաղանդին եւ արուեստագէտի անդուգական ձիւքերուն վրայ, որոնցմով այդ դեռ անպիտ թաւջութակահարը Պէթովընէն, Օպէնէն եւ Բիաթիէն, ամենաաշխատար կտորներ, այնչափ յաջողապէս կը թարգմանէ, արուեստի ցուցադրութիւնով մը, որ անթխտելի՛օրէն արժանի կը հանդիսացնէ զինքը իր անունին շուրջը հիւսուած շքեղ համբաւին, որով հայ արուեստագէտներուն անունը կը պանծացնէ ան :

* * *

Ալեքսանեան Նուագահանդէսը սակայն, աւա՛ղ, տխուր թեւադրութիւններու առիթ կուտայ :

Երկու սեռէ ան հոծ բաղմութեան մէջ, որով կը խաղտար Թէօթնեալի սրահը, շատ քիչ Հայեր մինակ կարելի էր նշմարել, — շա՛տ քիչ Հայեր մինակ հաճած էին . . . պատուել երիտասարդ հայ արուեստագէտը, որուն ունկնդիրները առաւելապէս կը բաղկանային օտարներէ, համբելով իրենց մէջ մինչեւ իսկ ամէնէն բարձր գասակարգերէն անհատներ, որոնք փութացեր էին մասնակից ընելուն քիչինքնին Պոլիսի ամէնէն կարեւոր նուագահանդէսներէն մէկուն, ըմբռնելով լիովին անոր ունեցած մեծ նշանակութիւնը՝ երաժշտական կազմակերպութիւններու մէջը :

Աս փուր պարագան ճշգրիտ պատկերացոյցն է գեղարուեստներու նկատմամբ մերիններուն ունեցած վերաբերումին, որ շատ հեռու է գոհացուցիչ հանգամանք մը ներկայացնելէ :

Նոյն իսկ երաժշտութիւնը, որ գեղար-

ուեստմեներուն քիչ մը է՛ն շատ մշակուածն է մեր մէջը, մինչեւ այսօր ներկայանալի վիճակ մը չէ՛ ստացած մեր սիրողներու ձեռքին տակը, եւ ընդգրկուած ա՛ն ամբողջումով, որով պէտք է փարիլ անոր, տիրանալու համար անոր կատարելութեանը :

Երաժշտութիւնը, *luxe*ի պէս բանի մը տեղ դբուած է մեր մէջը, կատարե՛լապէս, եւ աս ու ան անկիւնները, ան *amateur* պաւրնները կամ օրիորդները՝ որոնք կտոր մը սորված են ո եւ է նուագէ մը ձայներ մը հանել, երբեք չեն փարած իրենց դործիքին, արուեստին կատարեալ գիտակցութիւնովը :

Իւր ժամանց ձեռք կ'առնեն զայն, եւ իրենց կարողութեան սահմանը քանի մը թուլակօրէն սորվուած կտորներ մեքենաբար զարնելէն անդին չանցնիր :

Պարոնը, որ ջութակ կամ դաշնակ . . . ածել զիտէ, ամէն բան եղած ըլլալ կը կարծէ, երբ կը թեւակոխէ քիչ շատ ճանչցուած հեղինակի մը մէկ կտորը ճղակտոր հանելով արտաբերելու վիճակին :

Եւ աղջիկը, որ դաշնակին վրայ կը հանէ ան տեսակ ձայներ, զոր կատուի մը թաթիկներուն օտոզնաշարին վրայ պտուածն ալ պիտի հանէր, կը կարծէ ա՛լ ամէն բան լինողցած ըլլալ, ու ատով կը բաւականանայ, դաշնակին հետ ապրելով մինչեւ իր . . . կարգուելու օրը :

Երաժշտութեան մասին տիրող աս պզտիկ ըմբռնումին հետեւանքով է ահա որ, իբր թէ երաժշտասէրներու բաւական մեծաթիւ բազմութեան մը մէջէն, մինչեւ այսօր չենք ունեցած ներկայանալի արուեստագէտներ, որոնք կարենային Ալեքսանեանի մը պէս, լանդգնութիւն ունենալ քսան տարիներու ծաղիկ մատղալութիւնով, այնչափ դժուարահաճ օտա՛ր *amateur*ներ իրենց ունկնդիր ընել եւ անոնց հիացումին ալ արժանանալ : Ասիակ ըսելով, չեմ մոռնար սակայն Հարէնցը, Սինանեանը եւ Օր. Ծաղիկեանը, որոնք կ'ուզեն իրենց արուեստագէտի կարողութիւնները իրենց պահել :

Ասանկ սահմանելէ ետքը՝ գործիական երաժշտութեան բաժինը, խօսքը անգամ չեմ ըներ ձայնականին, որ բոլորովին լքուած

տարր մըն է, հակառակ ան հեշտալի *dolce fare niente*ին, զոր մեր տղաքներէն եւ աղջիկներէն շատերը կը վայելեն իրենց հօրը թեւին տակը, մինչեւ ո՛ր տարիքը որ կ'ուզէք, եւ որուն մէջ անոնք կրնային անգամ մը կոկորդնուն ձայնական կարողութիւնը փորձել :

Այ տղաքը, աղ աղջիկները, խուսափող չունի՞ն արդեօք :

* * *

Ահա բոլոր աս աւաղելի վիճակներուն համա՛ր է որ, Ալեքսանեանի, երիտասարդ ծաղկաթիւ — պէտք է կրկնել ասոնք միշտ — թաւջութակահարին տաղանդը եւ ձեռք բերած նախանձելի յաջողութիւնը մեծ նշանակութիւն մը կ'առնեն :

ՍԳԻԼԼՍ.

Արեւելք օրաթերթի բաղմաշխատ ու վաղեմի խմբագիր Յարութիւն էֆ. Սանտալճեանի մայրը՝ Տիկին Սօֆի Սանտալճեան երկարատեւ հիւանդութենէ մը ետքը իր մահկանացուն կնքեց երեքշաբթի օրը եւ յուղարկաւորութիւնը կատարուեցաւ չորեքշաբթի, Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցին յուղարկաւորներու ստուար բազմութեան մը ներկայութեամբ : Արարողութեանց կը նախադասէր գիւղին քարոզիչ Տ. Վահրամ Եպիսկոպոս Մանկունի, իր չուրջը ունենալով Տ. Ներսէս Վարդապետ Դանիէլեան ու քահանայական դասը : Հանդուցեալ Տիկնոջ մարմինը ամփոփուեցաւ գիւղին գերեզմանատունը ընտանեկան դամբարանին մէջ :

Այս դառն սուգին առթիւ մեր խորին վշտակցութիւնները կը յայտնենք մեր մայրակոթոյս բարեկամին՝ Յարութիւն էֆ. Սանտալճեանի որ հայ լրագրութեան տոկուն մշակներէն մէկը եղած է, 1885էն ի վեր իր նշանակելի տեղը ունենալով Պոլսահայ խմբագրական մարմնոյն մէջ, ինքզինքը նուիրած թուրքերէն եւ ֆրանսերէն թարգմանութեանց որոնք կարեւորագոյն բաժինը կը կազմեն մեր օրաթերթերուն :

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼԱՌԻՐԵԼԼԱ

Վ. Է. Պ. ԲԱՌԻԼ և Վ. Յ. ՋԷԼԻ

Թիւ 4

— Ս. Կոյս Մարիամին սիրուն, պոռաջ տղան, եկո՛ւր նստակը : Ես յիմար մը դարձեր եմ . միայն Աստուած գիտէ թէ ի՞նչ բան մթաղնեց իմ բանականութիւնս : Երկնային կայծակի պէս բան մը անցաւ կարծես ուղեղիս մէջէն, այնպէս որ ես բոլորովին բռնկեցայ ու չգիտցայ թէ ի՞նչ ըրի ու ի՞նչ խօսեցայ : Դուն պէտք է որ ինծի ներես, Լաուրէլլա, բայց պէտք է կեանքդ ազատես ու վերստին ելլես նստակը :

Աղջիկը շարունակեց լողալ, իբր թէ բան մը լսած չըլլար :

— Դուն չես կրնար մինչեւ ցամաք հասնիլ, դեռ երկու մղոն կայ : Մտածէ մօրդ վրայ : Եթէ քեզի գծախառութիւն մը պատահէր, ես սարսափէս կը մեռնէի :

Աղջիկը ակնարկով մը չափեց եղբրքին հեռաւորութիւնը : Յետոյ, առանց պատասխանելու, լողաց գէպի նստակը որուն եղբրքը բռնեց ձեռքովը : Երիտասարդը ոտքի ելաւ անոր օգնելու համար . իր թիկնոցը որ նստարանին վրայ ձգուած էր, ծովը սահեցաւ, երբ նստակը՝ աղջկան ծանրութեան տակ՝ մէկ կողմին վրայ կը ծռէր : Լաուրէլլա ճարպիկութեամբ մը վեր բարձրացաւ ու սահեցաւ իր առաջուան տեղը : Երբ Անթոնինո տեսաւ զայն նստակ ելած, դարձեալ ձեռք առաւ թեւակները : Աղջիկը, սակայն, քամեց իր ջրաթաթու վերարկուն, ցամքեցուց իր հիւսքերը, միեւնոյն ատեն գիտելով նստակին յատակը ու արիւնը նշմարելով : Արագ ակնարկ մը նետեց Անթոնինոյի ձեռքին վրայ որ՝ իբր թէ վիրաւորուած չըլլար՝ կը քաշէր թեւակները : «Ահա՛» ըսաւ Լաուրէլլա, ու տղուն կարկառեց իր թաշկինակը : Անթոնինո գլուխը թօթկեց ու շարունակեց թիափարել :

Աղջիկը ի վերջոյ ոտքի ելաւ, մօտեցաւ անոր ու թաշկինակը ամրապէս կապեց իւր վէրքին վրայ : Յետոյ առաւ անոր ձեռքէն, որչափ ալ որ ընդդիմացաւ երիտասարդը, թեւակներէն մէկը, նստաւ անոր դիմացը, բայց առանց զայն դիտելու, սեւեռուն ակնարկներով նայելով թեւակին որ կարմրած էր արիւնէն, եւ ուժգին բախումներով առաջ մղեց նստակը : Երկուքն ալ տփոյն ու լուռ էին : Երբոր ցամաքին մօտեցան, անոնց պատահեցան ձկնորսներ որոնք կ'ուզէին ձգել իրենց դիշերային ուռկանները : Անոնք Անթոնինոյին պոռաջին ու Լաուրէլլայի հետը ինկան : Ո՛չ մէկը վեր նայեցաւ կամ պատասխան տուաւ :

Արեւը Բրոչիտայի վրայ բաւական բարձրացած էր, երբոր անոնք հասան ծովափորը : Լաուրէլլա թօթուեց իր վերարկուն որ ծովուն վրայ զրկեթէ բոլորովին չորցած էր, ու ցամաք ցառքեց : Մանող ծերուկ կինը՝ որ առաւօտուն տեսած էր անոնց մեկնումը, դարձեալ կը դանդաղ տանիքին վրայ :

— Ձեռքիդ վրայ ի՞նչ ունիս, Թոնինո, պոռաջ պառաւրդէպի վար, Յիսո՛ւս Քրիստո՛ս, նստակն ալ արիւնով ողողուած է . . .

— Բան մը չէ, Գոմմարէ (կնքամայր), պատասխանեց նստավարը . ձեռքս ճեղքեցաւ դամէ մը որ շատ դուրս ցցուած էր : Վաղը կ'անցնի : Անիծեալ արիւնը նշանակութիւն չունի ձեռքիս համար որ աւելի վտանգաւոր երեւոյթ ունի, քան ինչ որ չէ իրապէս :

— Կ'ուզեմ գալ ու անոր վրայ բոյս կապել, Գոմմարելլօ (սան) : Սպասէ՛, կու գամ ահա :

— Մի՛ նեղուիք Գոմմարէ, արդէն պէտք եղածն եղեր է, ու վաղը պիտի անցնի մոռ-

յութի : Ես առողջ մօրթ մը ունիմ , որ խփոյն կ'աճի իւրաքանչիւր վէրքի վրայ :

«Ատախօ՛» ըսաւ Լաուրէլլա , եւ ուղղուեցաւ դէպ ի արահետը որ վեր կ'առաջնորդէր :

— Գիշեր բարի , պօռաց երիտասարդը ետեւէն , առանց անոր նայելու : Յետոյ ցամաք փոխադրեց նաւակին գործիներն ու կողովները , ու վեր ելաւ պզտիկ քարէ սանդուխէն դէպ ի իր տունը :

Գ.

Իրմէ զատ ոչ ոք կը գտնուէր երկու սենեակներուն մէջ ալ , ուր ան հիմա կը քալէր վեր ու վար : Բայ փոքրիկ պատուհանէն՝ որ կը գոցուէր միայն փայտէ փեղկերով , ներս կը հոսէր օդը՝ աւելի զով , քան խաղաղ ծովուն վրայ . ու մենութիւնը սիրելի էր անոր : Ան երկար ատեն կեցաւ Աստուածամօր փոքրիկ պատկերին առջեւ ու մտածկոտ զիտեց անոր վրայ փակցուած արծաթ թուղթէ լուսապսակը . բայց երբեք չմտաբերեց աղօթել . ինչ բանի համար պիտի խնդրէր , երբ այլեւս բան մը չէր յուսար :

Օդն ալ այսօր խաղաղ մնալու երեւոյթն ունէր : Նաւավարը մթութեան կը բաղձար , որովհետեւ յոգնած էր , ու արիւնի կորուստն ալ իր կարծածէն շատ աւելի տկարացուցած էր զինքը : Սաստիկ ցաւեր կը զգար իր ձեռքին վրայ , ուստի նստաւ աթոռակի մը վրայ ու քակեց վիրակապը : Ես մղուած արիւնը նորէն դուրս հոսեցաւ : Զեռքը , վերքին չուրջը , մեծապէս ուռած էր : Խնամով լուաց վէրքը ու երկար ատեն զովացուց զայն : Երբ որ վերստին մօտէն զիտեց , յստակօրէն որդեգրեց Լաուրէլլայի առամիտերուն նշանները , իրաւունք ունէր , կ'ըսէր երիտասարդը : Վայրենի գազան մըն էի ես , ու սակէ լաւ բանի մը արժանի չէի : Վաղն առտու կ'ուզեմ ձիուզերայի հետ ետ զրկել թաշկինակը , որովհետեւ Լաուրէլլան զիս նորէն տեսնելու չէ : — Յետոյ , խնամով լուաց թաշկինակը ու արեւին փակեց , որչափ որ կրնար ձախ ձեռքովն ու ալուաներովը , ձեռքը վերստին կապելէ ետքը : Անկէ վերջը ինքզինքը նետեց իր անկողինին վրայ ու աչքերը դոցեց :

Պայծառ լուսնակը զայն արթնցուց կէս մրափէ մը , միեւնոյն ատեն նաեւ իր ձեռքին ցաւը : Հաղիւ թէ տեղէն ցատքած էր , որպէս զի ջուրի մէջ հանգարտեցնէ արիւնին կծու ցաւը , չըշխն մը լսեց իր դրան առջեւ :

— Ո՛վ է հոգ , պօռաց ու դուռը բացաւ : Լաուրէլլա անոր առջեւ կեցաւ : Առանց հարցնելու ներս մտաւ : Վար առաւ ծածկոյը զոր փաթթած էր գլխուն ու սեղանին վրայ դրաւ պզտիկ կողով մը : Յետոյ խորապէս շունչ առաւ :

— Թաշկինակը փնտռելու եկած ես , զիտեմ , ըսաւ երիտասարդը : Կրնայիր այդ նեղութիւնը խնայել ինքզինքիդ , որովհետեւ առտուն կանուխ պիտի խնդրէի ձիուզերայէն որ զայն բերէ քեզի :

— Թաշկինակիս համար չէ , պատասխանեց Լաուրէլլա արագօրէն : Ես լեռը զացած էի փնտռելու համար այս խոտերէն որոնք արիւնին առաջը կ'առնեն : Ահա՛ , Ու վերցուց պզտիկ կողովին կափարիչը :

— Խիստ շատ յոգնութիւն , ըսաւ երիտասարդը , եւ առանց ու եւէ զառնութեան , խիստ շատ յոգնութիւն : Զեռքս արդէն աւելի լաւ է , շատ աւելի լաւ , ու եթէ աւելի գէշ երթայ , արդէն ատոր ալ արժանի եմ : Աս ժամուս զուն հոս ի՞նչ կ'ուզես : Եթէ մէկը քեզի հոս պատահի՞ . . . : Դուն գիտես արդէն թէ ի՞նչպէս կը բանբասն , թէպէտ եւ չգիտեն թէ ի՞նչ կ'ըսեն :

— Ես մէկու մը համար փոյթ չեմ ըներ , պատասխանեց աղջիկը բուռն շեշտով մը : Բայց կ'ուզեմ ձեռքդ տեսնել ու անոր վրայ զննել խոտերը , որովհետեւ ձախ ձեռքովդ կարդի բերելու վիճակին մէջ չես :

— Պէտք չի կայ այդ խնամքին :

— Բայց թո՛ղ որ տեսնեմ որպէս զի հաւատամ :

Լաուրէլլա ընտանեաւ բռնեց աղուն ձեռքը՝ զոր ան չէր կրնար պաշտպանել , ու քակեց վիրակապերը . երբ խոշոր ուռեցքը տեսաւ , ինքզինքն ամփոփեց ու բացազանչեց «Յիսուս Մարիամ . . . » :

— Վէրքը քիչ մը ուռած է , պատասխանեց աղան , առ ալ ցորեկուան մը ու զիշերուան մը մէջ կ'անցնի :

Աղջիկը պիտի թօթուեց :

— Այդպէսով դուն ամբողջ շաբաթ մը չպիտի կրնաս ծովուն վրայ ելել :

— Ես կը կարծեմ թէ վաղը չէ միւս օր կրնամ : Ի՞նչ փոյթս , տղէն :

(Շարունակելի)

ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Կեդրոնական Հնդկաստանի մէջ ծառ մը գտնուեցաւ , իր տեսակին մէջ ամենէն տարօրինակը եւ զարմանալին : Ծառին տերեւները յետին ծայր զգայնօտ յատկութիւն մը ունին , եւ այնչափ լեցուն են ելեկտրականութեամբ որ իրենց հպող ամէն առարկայի ելեկտրական ցնցում կը պատճառեն : Ծառին ելեկտրականութիւնը կը նուազի կամ կ'աւելնայ արեգակին հետ . այսինքն ելեկտրականութիւնը իր էն լեցուն աստիճանին մէջ կը գտնուի կէս օր ժամանակ . իսկ կէս գիշերին էն տկար աստիճանին մէջ : Ամպամած եւ խոնաւ օրեր ծառը իր ելեկտրականութիւնը ամբողջովին կը կորսնցնէ : Դիտելի կարեւոր կէտը սա է թէ՛ այդ ծառը բաւական ընդարձակ շրջանակի մը մէջ իրմէ հեռու կը պահէ թռչուններ , միջատներ , եւ երբեմն թռչնաւոր սողուններ : Կը խորհուի թէ՛ ի՞նչ միջոցով մարդիկ կրնան այս ծառը բաւազայն նպատակի մը համար գործածել :

Պատուասիկն հնարիչը . — Մինչեւ ներկայ ժամանակ , պաշտօնապէս Տոքթ. Ճէնըր միայն կը նկատուէր իրեւ առաջին հեղինակը պատուաստին : Բայց վերջերս ձեռք բերուած քանի մը ստոյգ տեղեկութիւններ հակառակը կապացուցանեն : Անգլիոյ Տօքտէր Նահանգին Մալթրըալըրս կոչուած աւանին գերեզմանատան մէջ՝ շիրմաքարի մը վրայ հետեւեալ արձանագրութիւնը գտնուեցաւ .

«Նուիրուած Տաւնչէցի՝ Պէնճըմին Ճէսթիի յիշատակին , մեռած 1816 ապրիլ 16ին , 79 տարեկան» :

«Ճէսթի ծնած էր Եէթմէնսթըրի մէջ , եւ մեծցած իրբեւ պարկեշտ ու պատուաւոր մարդ մը : Գիտութեան մէջ լուրջ հմտութիւն

ունէր : Ան եղաւ որ առաջին անգամ գործածեց ծաղկախաւ վարակուած կովու մը խաղաարար՝ պատուաստի համար : Ենորհիւ իր անմրցելի կարողութիւններուն՝ 1774ին կարողացաւ յաջող փորձեր կատարել , պատուաստելով շատեր՝ որոնց մէջ կային նաեւ իր զաւակները ու կիներ» :

Ամէն պարագայի մէջ , սակայն , Տոքթ. Ճէնըր էր որ ծանօթացուց պատուաստը՝ իրբեւ միակ զարման ընդդէմ ծաղկախտին :

Սըր Հեմրի Ճանսըն , անգլիացի պատուիրակը , Ուկանտայի մէջ հնգեղջիւրաւոր ընձուղաներ նշմարեց որոնք անծանօթ էին բոլորովին , թէպէտ տարիներով ճանչցուած Ափրիկէի բնիկներէն : Սըր Հէնրի այս գիւտէն քաջալերուած օրիններ ալ գտած է , որոնցմէ մէկ մէկ զոյգ հետը կը տանի Լոնտօնի կենդանաբանական պարտէզին համար :

Տուն մաքրող մեքենայ . — Լոնտօնի մէջ ծանօթ անձ մը նոր մեքենայ մը հնարած է տուն մաքրելու համար : Մեքենան խողովակ մը ունի ձկուն բաղադրութիւններէ գործարանաւորուած օր կրնայ երկնցուիլ եւ կրբաւտուիլ : Խողովակին կնձիթը՝ երբ ազատած եւ փռուած կարասիի մը վրայ դրուի , ամբողջ ազատութիւնները իր մէջ կը քաչէ մինչեւ որ մաքրուի : Այս մեքենան Լոնտօնի մէջ ժողովրդականութիւն չահած է . այնպէս որ կը կարծուի մօտ օրէն «Տուն մաքրող ընկերութիւն» մը կազմուած տեսնել :

Վ. Ա. Գ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Պատրիարք Հայր Խառն Ժողովի չորեքշաբթի օրուան նիստին մէջ տեղեկութիւն հաղորդեց Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան մասին եղած կարգադրութիւններուն վրայ եւ յոյս յայտնեց որ Կաթողիկոսի հաստատութեան Կայսերական Պէրաթը կը շնորհուի մօտ օրէն :

Բանաւոր որոշում մը տուաւ Խառն Ժողովը իր նոյն նիստին մէջ , Երբ վարդապետի մը եպիսկոպոսական վկայական տալ յարմար

դատուի, նախապէս խօստանալիս պիտի առնուի իրմէ թէ չպիտի լքանէ այն Վիճակը որուն վրայ եպիսկոպոս կը ձեռնադրուի. եւ երբ առաջնորդութենէ հրաժարի իսկ, պարտաւոր պիտի ըլլայ նոյն թեմին մէջ ընակիլ եւ այլուր չերթալ :

Հապէսեւրու Մենելիք թագաւորին ոսկերչապետ Յակոբ Պաղտատարեան եւ Հապէշիս-տանի արքայական տան մատակարարապետ Նիկողոս ինչապետութեանի անդրանիկ սրգին Զաւէն ինչապետեան այս օրերս Եղիպատոս կը սպասուին ուսկից Եւրոպա պիտի երթան իարեւոր գնումներ կատարելու համար Մենելիք թագաւորին հաւոյն :

Գալիսայեան ուրբանցի Տիկնանց նորակազմ իննամակալութիւնը իր առաջին նիստը ըլլաւ երեքշաբթի օրը Ղալաթիոյ իմօրհրդաւանին մէջ : Ներկայ էին Տիկին Բրաբ Աղասեան, Տիկին Սրբուհի Կ. Գարակէօղեան, Տիկին Իսկուհի Փափազեան եւ Տիկին ԷլիզաՅէր-Յարութիւնեան : Ներկայ էին նաեւ Ուրբանցին իննամակալներ՝ Բարթող էֆ. Թեւեան եւ Կարապետ էֆ. ինչապետեան, որոնք հարկ եղած տեղեկութիւնները հաղորդեցին այդ հաստատութեան բարոյական եւ նիւթական վիճակին վրայ : իննամակալուհի Տիկինները գոհութեամբ տեղեկացան մինչեւ ցարդ եղած կարգադրութիւններուն որոնց շնորհիւ լանջ էր խնայուած : Խաղիւզի Ուրբանցը գնելու այն ուղղութեան մէջ զոր կը տրամադրէր բարեկիշատակ հիմնադրին՝ Սրբուհի Մայրապետին կտակը եւ տալ անոր այնպիսի կազմակերպութիւն մը որ կատարելապէս իր նպատակին ծառայելու արժանի վիճակ մը ունենայ : Ս. Պատրիարք Հայրը, որ նոյն միջոցին Սանատարեան վարժարանի իննամակալութեան նիստին կը նախադահէր, Տիկնանց իննամակալութեան ժողովարարը դալով, քաջալերեց զանոնք եւ յորդորեց որ սիրաշատ եւ մայրական գործրով փաբին իրենց ստանձնած աշխատութեան՝ տիպար հաստատութեան մը վերածելու համար Գալիսայեան Ուրբանցը :

Սիւրիհիսարի Առաջն. Փոխանորդը եւ Բաղ. Խորհուրդը, Պատրիարքարանի աւելցնելով Սիւրիհիսարցի բանտարկեալներուն

էնկիւրիի դատարանէն տնօրոտ արձակուիլը եւ Սիւրիհիսար հասնիլը, երախտագիտութիւն կը յայտնեն Կոյս. Կառավարութեան արգարտաւորութեան եւ Ս. Պատրիարքի հոգածութեանը համար :

Նեվէհեհէն կը գրեն Պատրիարքարան թէ տեղւոյն ժողովուրդը, որ 100 տունէ կը բաղկանայ, դպրոցէ դուրկ է, որով 80ր չափ աղաք կը թափառին փողոցներուն մէջ : Ժողովուրդը զբամապէս անկարող ըլլալով, դարձան կը խնդրէ Պատրիարքարանէն :

Երուսաղէմի մէջ վերջերս տեղացող սաստիկ անձրեւներէն բաւական վիստ տառջ եկեր է : Գեթսեմանիի ձորին մէջ գտնուող Աստուածամայր տաճարը կիսովին ողողուեր է :

Նպաստից Յանձնաժողովը Ս. Պատրիարքին տուած տեղեկութիւններէն իմանալով թէ Ուրբանցներու մէջ մասը ներկայ տարւոյ վերջը կը թուրէ քառամեայ չըջանին տեւողութեան պայմանաժամը եւ կան ուրիշներ ալ՝ որոնց չըջանը կը լրանայ քիչ ատենէն, խնդրոյ նիւթ ըրաւ թէ ի՞նչ կարգադրութիւն պէտք է ընել : Նկատելով որ արդէն որոշուած է քանի մը գլխաւոր կեդրոններ արհեստանոցներ հաստատել, երկրագործական դասընթացքով մը, եւ փակուելիք Ուրբանցներէն անչափահաս աղաքները հոն փոխադրելով վարժեցնել արհեստներու, հարկ դատեց որ այդ կարգադրութիւնը գործադրուի, ու յառաջիկայ դարեան, այսինքն մարտի վերջը, Ուրբանցներու թուականները մասամբ կամ ամբողջութեամբ շարունակելով վճարել ըստ պահանջման ժամանակին, անկէ ետքը փակուելով բոլոր Ուրբանցները, արհեստանոցներ բացուին, Ա. Մշոյ մէջ, Բ. Մարաշի մէջ ժամհարեանց Ուրբանցը վերածել արհեստանոցի, Գ. Սվադի մէջ, Դ. Բաղէշի մէջ, ի մասնաւորի նուիրուած Զանչեանցի յիշատակին եւ անոր անուամբ նուիրուած նըպաստներով, Ե. Վանայ մէջ : — Նոյնպէս զիւղական դպրոցներու համար որոշուեցաւ ամսական միայն 50 ոսկիի (տարեկան 600 ոսկի) գումար մը յատկացնել, եւ Ս. Պատրիարքին յանձնուեցաւ որոշել թէ այդ գըպրոցները ո՞ր տեղեր բանալ պատշաճ է :

Վաղը, կիրակի, Գալֆայեան Որբանոցին հաստատման 36րդ տարեդարձը ըլլալով, Ս. Պատրիարք Հայրը Պատարագ պիտի մատուցանէ Խաղաղի Ս. Ստեփաննոս եկեղեցիին մէջ եւ յետոյ պիտի առաջնորդուի Որբանոց որուն մատրան մէջ պաշտօն եւ խաչահանագիստ պիտի կատարուին :

Տոք. Լեւոն Էֆ. Մալխասեան, որ յաջող քննութեամբ մը իր բժշկական վկայականը ստանալէ ետք՝ Բարիլի հիւանդանոցներուն մէջ գործնական ուսումնասիրութիւններ կատարած էր տարիներով, մայրաքաղաքս վերադառնալով՝ հաստատուած է Բերա Երիտասարդ Տոքթորը իրեն մասնագիտութիւնը րած է մանկաբարձութիւնը եւ այդ ճիւղին մէջ իր ճարտարութեան փորձերը տուած արդէն : Անտարակոյտ, Պօլսոյ մէջ ալ քիչ ատենէն պիտի գնահատուի իր բժշկական կարողութիւնը :

Մաղկեայ փիլոն կրեւու արտօնութիւն տուաւ Ս. Պատրիարք Հայրը՝ Օրթադիւղի Տ. Վրթանէս քահանային, իբրեւ գնահատական հաւաստիք մը անոր բաղմամեայ քահանայագործութեան :

Նախաձեռնութեամբ Մկրտիչ Էֆ. Մանուկեանի, Գառըզիւղի եկեղեցիին կից ընդարձակ սրահ մը պիտի շինուի, 600 ոսկի ծախքով, հարսանեկան հանդէսներու առթիւ կատարելի ընդունելութեանց յատուկ :

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԳԱՐԱԳԱՇ

Վերջին պահուն, խորին ցաւով կիմանանք թէ Կարապետ Էֆ. Գարագաշ որ երկար ժամանակէ հետէ հիւանդ էր եւ կաթուածի նոր ու սաստիկ հարուած մը ունեցած էր վերջերս, չկրնալով դիմանալ՝ հինգշաբթի, կէս օրին, աւանդեր է հողին : Երբ այս տղերքը հրապարակ ելլեն, իր յուզարկաւորութիւնը կը կատարուի Հայ Հռոմէականաց Ս. Աստուածածին եկեղեցին, Բերա :

Կարապետ Էֆ. Գարագաշ բազմակողմանի հմտութեան տէր ու լեզուագէտ անձնաւորութիւն մըն էր, պետական ծառայութեան մէջ գտնուած՝ երմտական ճիւղին վերաբերող զանազան պաշտօններով, ու քանի մը տարիէ հետէ՝ հանգստեան կոչուած, իր հիւան-

դութեան պատճառաւ : Ատենօք, ինչպէս կը յիշուի, հրատարակած է երմտական թերթ մը, Ֆրանսերէն լեզուով, որուն մէջ լիովին յայտ կուզար ինչպէս իր երմտագիտութիւնը՝ նոյնպէս իր հմտութիւնը Ֆրանսերէն լեզուի Քաջավարժ էր նաեւ օսմաներէնի ու գերմաներէնի :

Կարապետ Էֆ. Գարագաշ դրագէտ ու բանաստեղծ էր միանգամայն, եւ Մալխի մէջ հրատարակուած են իր քերթուածները ու ռամանաւոր թարգմանութիւնները, որոնց մէջ զգացում, ճաշակ ու լեզուական նրբութիւն հաւասարապէս կը փալլէին : Այնքան ինքնավստահ ու խղճամիտ էր թարգմանութեան մէջ, որ շատ անգամ բնագին ալ հայերէնին հետ մէկտեղ հրատարակել կուտար :

Հայ Հռոմէական հասարակութիւնը որուն պատուաբեր անդամներէն մէկն էր Կ. Գարագաշ Էֆ., մեծապէս օգտուած է անոր ծառայութիւններէն՝ իբրեւ անդամ Պատրիարքարանի ժողովներուն, որոնց մէջ ինքզինքը մասնաւորապէս նուիրած էր կրթական ճիւղին : Եւ կարելի է ըսել թէ ինքը եղած է կազմակերպիչը Ս. Լուսաւորչեան Ուսումնարանին զոր լիտէի աստիճանին հասցուց, անձամբ վարելով անոր վերատեսչութիւնը՝ որչափ ատեն որ կը ներէր իր առողջական վիճակը ու հաւանդանալէն ետքն ալ՝ իր հոգածութիւնը նուիրելով անոր :

Կարապետ Էֆ. Գարագաշի բովանդակեանքը մտաւորական աշխատութեանց նուիրուած կեանք մը եղած է, — դրական, ուսումնական ու երմտական ճիւղերուն վերաբերեալ զրչի աշխատութիւններ, թէ՛ մայրենի լեզուով եւ թէ՛ օտար լեզուներով : Անձնապէս, լուրջ դէմքով՝ համակրելի անձ մըն էր, մտացի ու խօսուն, որուն հետ տեսակցիլը ճշմարիտ հաճոյք մըն էր իր բարեկամներուն ու ծանօթներուն համար : Վերջին տարիներս, իր կէս-հիւանդ վիճակին մէջ, որ կը հարկադրէր զինքը տանը անկիւնը մնալու, իր սիրելիական զբաղումներն էին միշտ գրականութիւնը ու կրթական գործը :

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՆՈՍԵԱՆ
Կ. Պոլիս, Ֆինճանըրար եօզուշու, Թիւ 27

Գնդ. Տոբ. Աղեխանդր Պէյ Արապեան այս անգամ իր բնակութիւնը հաստատած է Բերա, Թարա-Պաշի քիւ 121, ուր կը գրեւորի առաւօս եւ երեկոյ: Իսկ կես օրուան միջոցները, ուրբաթ եւ կիրակիի գաւ, կը գտնուի Պանեն-Կաբու, Միւսասեան դէղարանը:

4—10

ՏՈԲԹ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Կեդրոնացեալի Մասքոսեան Տպարան
Ֆինանսները, Կ. Պոլիս

Գիտական չարժուած Ա. Տարի (1885) (Սպառած): — Գիտական չարժուած Բ. Տարի (1886) 20 զրշ: — Գիտական չարժուած Գ. Տարի (1887) 20 զրշ: — Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կենդ. Հիւսուածարանութիւն եւ Մարդկային կազմախօսութիւն ու Բնախօսութիւն, Դասագիրք երկրորդական վարժարանաց): 40 զրշ: — Նախորդին համառոտը. Դասագիրք Նախակրթարանաց: 8 զրշ: — Ուսումնասիրութիւն միջոյնի քաղաքային պատմութեան եւ կազմութեան վրայ (Յիւսուածքէն) 10 զրշ: — Մասնաւոր հայ տառից (Պատկերաւ Իզմիրեանց

միջնակարգ) 10 զրշ: — Մասնաւոր քաղաքային 10 զրշ: — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Յիւսուածքէն) 10 զրշ: — Գրիգոր Աղաթոն (Ծագում եւ կենսագրութիւն) 2 1/2 զրշ: — Առողջապահութիւն: 25 զրշ: — Մշակութան պատմութիւն (Կազմախօսութիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն) 6 զրշ: — Մարդկային Սոցիալականութիւն: 5 զրշ: — Բառացուցակ Արտանունաց (Բ. Տիւր) 3 զրշ: — Տարեկանագիրք (Գ. Տիւր) 3 զրշ: — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Հայ. Թարգմանութիւն) 10 զրշ: 4—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԼ, ՄԵՍ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 200

Կալարա-Սերայի Լիւսին դէմ

Դե. Եւ. Շք. օրերը առաւօսեան կանուխէն մինչեւ իրիկուն ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը 6 կէն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻՒՆԻՅՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԺԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հասուցեալ փաստք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագումար եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագումար	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԺԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հասուցեալ փաստք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000 »
Դրամագումար եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — Ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ տնտեսական կերպով աւելի դերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Եահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողը ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն տնտեսք, որ Եահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԹԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՉԱՆԴԱՆ

Բուրժոյ եւ Արեւելքի Տեղեկութիւն

Կ. Պոլիս, Կալարա, Բանաստորութիւն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Կարճակտրութեան Բարձր գիտութիւնը քաղաքացի մը

Ուսանողներու եւ զարգացեալներու համար Կաղանդի իբր օգտակար նուէր կը յանձնարարենք Տոբթ. Տաղաւարեանի գործերէն .

Առսնին Առողջապահութիւն , ընտիր թուղթի վրայ , մասնաւոր տպագրութիւն՝ փառապաշտ 35 զրշ .

L'Univers et sa formation 10 »

Մագումն հայ սառից 10 »

Նոյնպէս , յանձնարարելի եւ հետեւեալ գիրքերը՝ իբր գրեական նուէր Կաղանդի .

Կիցն իբրեւ Օրիորդ , Հէրման Քլէնքէի , թարգմ. Մ. Կ. Նազիկեան 10 զրշ .

Նոյն հատորը՝ փառապաշտ 35 »

Բառագիրք Գրանստեքէն հայերէն Կոմիտաս Ոսկեանի 25 զրշ .

Սոյն բոլոր գիրքերը , Մատթէոսեան տպարանէն հրատարակուած , կը վաճառուին Մատթէոսեան Թղթավաճառանոցը , Կ. Պոլիս . 1—6

ԻԻԹԻԻԶԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆՏԻԻ Եւ տեւեալ թարգմանութիւնները կը դանուին մայրաքաղաքիս գրաւաճառներուն քով .

	Հատոր	Ղրշ.
Թափառական Հրեայ	4	50
Սկզբունք Քաղ. Տնտեսութեան	1	4
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեզուրկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Արուարձանի տղան	3	15
Հանրակրթութիւն ոճիւրը	1	5
Ընտանեկան գաղտնիքներ	3	15

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը դարմանէ մասնաւորապէս , նոր մեթոտներով եւ խնամով ստամոքսի , աղեաց , լիզակաւն ճարձխաններու հիւանդութիւնները , ջղային սկարութիւնները , գաղիակաւն ախտերը (սիֆիլիս եւլն) եւ լնորթի հիւանդութիւնները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :

Գրասուն նՇԱՆ—ՊԱՊԻԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, 60 Էսկի-Չապրիե Ճաւսեաի, 60

Հրատարակուեցաւ

ՀՐԱՆՏ Ս. ԽԱՆՃԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

190 էջ, 16աւալ, գին 5 ղրշ .

Հարգարուած բազմաթիւ լուսատիպ պատկերներով : Անհրաժեշտ ամէն դպրոցականի եւ վաճառականի :

Նոյն հեղինակին՝

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԻՋԻՆ ԴԱՍԵՐԹԱՅԲ

240 էջ, պակրդ . գին 5 ղրշ

Եւրոպական ամենէն համբաւու օր եւ նորագոյն գործերու հետեւողութեամբ :

Սոյն երկու գործերու իւրաքանչիւրէն դաւառի ուսուցիչներու նմոյշ կը զրկուի 50 փարայի գրողաթուղթի փոխարէն :



ՌՕՍԻԱ — ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԵՄՔ

Ընկերութեան դրամագլուխը , ամբողջապէս վճարուած	10,667,667 Քր. Եւ Ք.
1901 տարւոյ մէջ դանձուած ապահովագրիներ ու տուրս	54,000,000 »
Երաշխաւորութեան գումար	122,000,000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000 »

Կեդրոնաւորի , Ղալաթիոյ ֆառափին վրայ , Մատաւսան հին տեղը

Ընդհ. ԲՆՆԻՅ
Ա. ՀԻԻՐՄԻԻՅ

Ընդհ. Գրեթալայ
ԹԷՈՏՈՐ ՌԷԲԵՆ

